ժամանակ, և նախ քան գնա այլ ուրիշ պարոն նստեալ կայր, Ահարոն ա-նուն. և բազում չարիս և նեղութիւնս յարոյց ի վերայ Օլախաց երկրի, մինչ որ համբաւն եհաս խոնտիքարին. և խոնտիքարն հրամանք արաւ՝ զի փութով գնասցէ առ նա, և նա գնաց։ Եւ մինչ նա դարձաւ, եկին Օլախի մեծամեծք և երդուան այս Բեթրային, և առեալ տարան գնա և նստուցին ի պարոնութիւն, և հնազանդեցան նմա. ընդ որս էր և աւագն ընդ նմա. և փոքր մի ժամանակ նստան ի պարոնութիւն։ Եւ ահա այդ Ահարոն պարոն դարձեալ եկն ի պարոնութիւն, հրամանաւ խոնտիքարին. և ունէր ընդ իւր զԹուրքի պարոնն՝ որ կոչի Աղայ, զորովք իւրովք. և եկեալ ի Ասն կենդանի ձերբակալ արար զԲեթր պարոնն, և զԱւագն՝ որ էր հայ, Մաթէյի որդի, և իսկոյն հատին զքիթն, և տարաւ ի խոնտիքարն. և զաւագն եդին ի բանտն երկաթի կապանօք. և նա փախեաւ ի բանտէն և եկաւ. և փոխանակ նորա կալան զերկու հայ կտրիճ, զԳրիգորն Մարքոյին և զՍիմոն Զոխնային, և եդին ի խաւարային բանտն։

1593. Թվ. ՌԽԲ. Փետրուարի ամսոյ Ի. Վաղճանեցաւ Տէր Մկրտչէ որդիս, և իրիցկինն իւր և որդին Զատիկն, ի միում ամսեանն, կամաքն Աստուծոյ. զոր նմա փառք և գոհութիւն յաղագս ամենայնի այսորիկ. ամէն։

1595. Թվ. ՌԽԴ. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ որ էր մարտին 8, մեծ գետյարոյց եղեւ ի Կամենից քաղաք, և մեծ պակաս արաւ քաղքին, զդրունսն կոտորելով զերկոսին. և մեծ պակասութիւն հասոյց ամենայն որպիսութեանց, թէ չինուածոց և թէ կալերաց և թէ անասնոց և ամենայն ընչից։ Զոր այս ամենայն եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց. զոր վասն ամենայնի այսորիկ փառք և գոհութիւն Աստուծոյ. ամէն։

Եւ ի սոյն ամի խազախներն ժողովեցան մի վայր, զոր ոմանք ասացին եթէ էին իբրեւ 20,000, և մտան պատրաստութեամբ զինուք յերկիրն Օլախաց, և բազում վնաս գործեցին ուր և հասին, մինչ զՕլախաց պարոն զԱհարոն երկրէն փախուցին, և զօրքն կոտորեցին, զայլսն այրեցին, և զամենայն ինչ աւարեցին և թալանեցին. մինչ զի զՀայոց եկեղեցւոյ զդուռն կոտորեցին, և մտան ի ներս, և բազում բարութիւն առին, ոսկի, արծաթ, հանդերձ մեծագինս, զոր էին պահեալ զեկեղեցի Հայոց ազգ։ Եւ ինքեանք ելին և անցան այս կողմ. բազում վնաս արարին Կամենից քաղքին բոլորի գեղուն, անասնոյ, ոչխարի, արջառոյ և հացոյ. և յետ սակաւ աւուրց դարձեալ անցին Օլախաց երկիր. և գնացին և հաշտեցան և երդուան միմեանց, և միաբանեցան հետ պարոնին. և մտան Թուրք աշխարհ վասն պատերազմելոյ ի հետ Տաճկաց։ Զոր երկնաւոր Աստուած տացէ նոցա կարողութիւն, և զօրացուսցէ զնոսա.... զի փոքր մի ժամանակ խաղաղութիւն գտցէ ազգն քրիստոնէից։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։ Եւ է գլխաւոր սոցա միոյն անուն Լոպատայ և միւսոյն Նարիվայքո։